ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան **31.10.2012թ.**

2011 թվականի հոկտեմբերի 12-21-ը Հայաստանի Հանրապետությունում անցկացված մարդահամարի նախնական արդյունքները

2011թ. հոկտեմբերի 12-21-ը Հայաստանի Հանրապետությունում անցկացված հերթական մարդահամարի վիճակագրական մշակման աշխատանքների առաջին փուլն ավարտվել է: Աշխատանքների իրականացման գործառույթներին օժանդակել են ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովը՝ ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար, պարոն Ա.Գևորգյանի նախագահությամբ, Հայ Առաքելական Եկեղեցին, դոնոր հանրությունն ի դեմս՝ Համաշխարհային Բանկի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի գրասենյակի, ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության, Շվեյցարիայի Դաշնային կառավարության, Նորվեգիայի կառավարության, Իտալիայի կառավարության, Հնդկաստանի կառավարության, ինչպես նաև «Արմենտել», «Ղ-Տելեկոմ» և «Օրանժ Արմենիա» բջջային օպերատորները:

Մարդահամարի դաշտային աշխատանքների ավարտից հետո իրականացված տվյալների ծածկագրման և մուտքագրման արդյունքում անհատական տվյալները միավորվել են մարդահամարի տվյալների վիճակագրական տեղեկատվական բազայում, և մարդահամարի տվյալների մշակման CSPro ծրագրային փաթեթի (որը ԱՄՆ-ի հաշվառումների բյուրոյի աջակցությամբ կիրառվել է նաև 2001թ. մարդահամարի ժամանակ) միջոցով իրականացվել է տվյալների տեղեկատվական բազայի կառուցվածքային (սակայն, դեռևս ոչ տրամաբանական) հսկում: Կառուցվածքային հսկման ծրագրի կիրառումը ընթացակարգային գործընթաց է և նպատակաուղղված է ապահովելու տեղեկատվական բազայում, ՀՀ վարչատարածքային բաժանմամբ սահմանված, աշխարհագրական ծածկագրերին համապատասխան, հաշվային տեղամասերի ու դրանցում գրանցումների ամբողջականությունը, սկզբնական գրանցումների և մուտքագրման արդյունքում ձևավորված ցուցանիշների միջև տարբերությունների վերհանումն ու պարզաբանումը:

Հայաստանի Հանրապետություն,0010, Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3
Հեռախոս:(+37410) 524 213, Ֆաքս: (+37410) 521 921,
E-mail: armstat@sci.am, info@armstat.am,URL:http://www.armstat.am (հայելային կայքէջ՝ http://www.armstat.info)

ՀՀ մարզերի և Երևան քաղաքի մշտական ու առկա բնակչության թվաքանակների ցուցանիշները

(հաշվառման պահի՝ 2001թ. հոկտեմբերի 9-ի լույս 10-ի կեսգիշերվա, 2011թ. հոկտեմբերի 11-ի լույս 12-ի կեսգիշերվա դրությամբ)

մարդ

	Բնակչության թվաքանակ			
	առկա[1]		մշտական[2]	
	2001թ.	2011թ.	2001թ.	2011թ.
Հայաստանի Հանրապետություն	**3 002 594**	**2 871 771**	**3 213 011**	**3 018 854**
ք. Երևան	1 091 235	1 054 698	1 103 488	1 060 138
Արագածոտն	126 278	125 539	138 301	132 925
Արարատ	252 665	246 880	272 016	260 367
Արմավիր	255 861	256 639	276 233	265 770
Գեղարքունիք	215 371	211 828	237 650	235 075
Լոռի	253 351	217 103	286 408	235 537
Կոտայք	241 337	245 324	272 469	254 397
Շիրակ	257 242	233 308	283 389	251 941
Սյունիք	134 061	119 873	152 684	141 771
Վայոց ձոր	53 230	47 659	55 997	52 324
Տավուշ	121 963	112 920	134 376	128 609

ՀՀ 2011թ. մարդահամարի նախնական տվյալների համաձայն, ՀՀ 2001թ. մարդահամարի համեմատությամբ, առկա բնակչության թվաքանակի ցուցանիշը՝ ըստ հաշվառման պահի, նվազել է 130 823 մարդով, իսկ մշտական բնակչությանը՝ 194 157 մարդով:

Ըստ ՀՀ 2011թ. մարդահամարի նախնական արդյունքների ՀՀ մշտական բնակչության 36.7 % կազմում է գյուղական բնակչությունը, իսկ 63.3 %՝ քաղաքայինը, ինչի գերակշիռ մասը (55.5 %) բաժին է ընկնում մայրաքաղաք Երևանին:

Քաղաքային են համարվում այն բնակավայրերը, որոնք «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված են որպես քաղաքներ, մնացած բնակավայրերը, որոնք օրենքով սահմանված են որպես գյուղեր՝ համարվում են գյուղական:

---

[1] Յուրաքանչյուր վարչական միավորի **առկա բնակչության** թվաքանակի ցուցանիշը ձևավորվել է դրանում մշտապես (սովորաբար) բնակվող ու հաշվառման պահին ներկա և *ժամանակավոր ներկա* հաշվառված անձանց ընդհանուր թվաքանակների հանրագումարից: Ժամանակավոր ներկա բնակչության թվաքանակի ցուցանիշում ներառվել են մարդահամարի հաշվառման պահի դրությամբ տվյալ համայնքում՝ քաղաք, գյուղ, տուն (շինություն) կամ ժամանակավոր կացատեղ հանդիսացող կազմակերպությունում,մեկ տարուց պակաս ժամկետով գտնվող անձանց թվաքանակի ցուցանիշները, որոնց մշտական բնակավայրը տվյալ համայնքի (այդ թվում՝ հանրապետության) սահմաններից դուրս է:

[2] Յուրաքանչյուր վարչական միավորի **մշտական բնակչության** թվաքանակի ցուցանիշը ձևավորվել է մարդահամարի ժամանակ տվյալ տարածքում մշտապես (սովորաբար) բնակվող ու հաշվառման պահին ներկա և *ժամանակավոր բացակա* հաշվառված անձանց ընդհանուր թվաքանակների հանրագումարից: Ժամանակավոր բացակա բնակչության թվաքանակի ցուցանիշում ներառվել են տվյալ համայնքում՝ քաղաք, գյուղ, տուն (շինություն), մշտապես (սովորաբար) բնակվող, սակայն մարդահամարի հաշվառման պահի դրությամբ, տվյալ քաղաքային կամ գյուղական համայնքի (այդ թվում՝ հանրապետության) սահմաններից դուրս՝ մեկ տարուց պակաս ժամկետով բացակայող անձանց թվաքանակի ցուցանիշները (տես՝ «2010թ. մարդահամարների և կացարանների հաշվառման Եվրոպայի վիճակագիրների կոնֆերան-սի հանձնարարականներ» մշակված Եվրոստատի հետ համագործակցությամբ, ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով, ՄԱԿ, Նյու Յորք և Ժնև, 2006, գլուխ III «Հաշվառման ենթակա բնակչություն», կետ 167 «Ժամանակավոր բացակայողներ», էջ 56 (ռուսերեն տարբերակ), էջ 37 (անգլերեն տարբերակ)):

ՀՀ մշտական բնակչության թվաքանակների
քաղաքային և գյուղական բաշխվածությունն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի

մարդ

	Բնակչության թվաքանակ			
	քաղաքային		**գյուղական**	
	2001թ.	**2011թ.**	**2001թ.**	**2011թ.**
Հայաստանի Հանրապետություն	**2 066 153**	**1 911 287**	**1 146 858**	**1 107 567**
ք. Երևան	1 103 488	1 060 138	-	-
Արագածոտն	32 864	30 595	105 437	102 330
Արարատ	79 885	74 103	192 131	186 264
Արմավիր	98 292	85 050	177 941	180 720
Գեղարքունիք	78 957	71 423	158 693	163 652
Լոռի	169 953	137 784	116 455	97 753
Կոտայք	153 981	137 481	118 488	116 916
Շիրակ	174 260	146 908	109 129	105 033
Սյունիք	104 147	95 170	48 537	46 601
Վայոց ձոր	19 605	18 449	36 392	33 875
Տավուշ	50 721	54 186	83 655	74 423

Քաղաքային բնակչության թվաքանակի ցուցանիշը՝ 2001թ. համեմատ նվազել է 154 866 մարդով կամ 7.5 %-ով, իսկ գյուղական բնակչությանը՝ 39 291-ով կամ 3.4 %-ով:

Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի վերջնական արդյունքների (այդ թվում՝ թվաքանակի, ինչպես նաև այլ բնութագրիչների) հրապարակումը նախատեսված է 2013 թվականին:

Պարզաբանումների համար տեղեկատու՝
☎ *523 356 Վիճակագրական տեղեկատվության տարածման և մարկետինգի բաժին*
☎ *524 528 Մարդահամարի և ժողովրդագրության բաժին*